

# ՆՈՐ ԽԱՐԻԵՐԳ

ՀԱՄԱ-ՆԱՐԻԵՐԳՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԻՆՆԵՐՈՐԳ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՈՐՆԱԳԻՐ ՄԱՐՄԻՆԻ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՅՈՒՆՈՒԱՐ 20, 1937

361

2-20

361  
2-20

1 MAR 2010

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Գումարում ձև Հոկտեմբեր 11, Կիրակի Կեսօր, Ժամը ձիշտ 12-ին  
Հօք էլ Պրէտֆրրտի Սրահին մէջ

Ներկայ պատգամաւորներու եւ Հայրենակցական Միութեանց ներկայացուցիչներու թիւը ստուգուեցաւ՝ քննուելով անոնց վաւերագիրները: Մեծամասնութիւն կազմուած ըլլալով ժողովը օրինաւորապէս բացուած յայտարարուեցաւ Կեդրոնական Վարչութեան պատուարժան ատենապետին կողմէն:

Բարի գալուստի, շնորհակալութեան եւ գնահատութեան քանի մը խօսքեր ըրաւ Պր. Մուշեղ Աճէմեան՝ Կեդրոնի ատենապետը, խօսեցաւ տարուան մը իրենց պաշտօնավարութեան ընթացքին իրենց թափած աշխատութեան եւ կորովի ջանքերուն նկատմամբ եւ Միութեան շինարար եւ օգտակար գործին շուրջ: Դիւանի ընտրութեան ձեւին մասին պատգամաւորներու կարծիքներն լսելէ յետոյ առաջարկուեցաւ գաղտնի քուէարկութեամբ ընտրել դիւանը: Դիւանին լիազօրութիւն տրուեցաւ ընտրել 3 անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ատենապետի եւ ատենագրի համար 3-ական անուններ բերելու:

Պրնք. Սարգիս Կօչկարեան, Մարտիրոս Տէր Յովհաննէսեան եւ Թադէոս Հեօրիցեան բերին երկու ցանկեր որոնք էին՝

Ատենապետի համար Պրնք. Գէորգ Դանիէլեան  
Յակոբ Ճորնորեան  
Դաւիթ Տէրվիշեան

Ատենագրի համար Յովհաննէս Նահիկեան  
Գրիգոր Համբարձումեան  
Տիգրան Էփմէֆեան

Քուէի մեծամասնութեամբ ընտրուեցան՝  
Գէորգ Դանիէլեան՝ Ատենապետ  
Յովհաննէս Նահիկեան՝ Ատենագրի

Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն էին  
Յակոբ Ճորնորեան՝ Ատենապետի համար  
Գրիգոր Համբարձումեան՝ Ատենագրի համար

Նորընտիր ղեկանի կողմէ Ատենապետ Պր. Դանիէլեան շնորհակալութիւն յայտնեց իրենց տրուած այդ պաշտօնին եւ պատիւին համար եւ թելադրեց պահել ժողովին վեհութիւնն ու մեծութիւնը: Կարգով կարգացուեցան մասնահիւղերու պատգամաւորներու եւ հայրենակցական ընկերութիւններու ներկայացուցիչներու անունները որ հետեւեալներն էին —

- ԿԵՂՐ. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԷՆ
- Մուշեղ Անէմեան
- Միհրան Գզիբեան
- Յարութիւն Խօլիկեան

- ՊԱՏՈՑ ԱՆԴԱՄ
- Ս. Կօշկարեան

- ՊՈՍԹԸՆԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ
- Յովհաննէս Ս. Նահիկեան
- Գրիգոր Համբարձումեան
- Արա Կասաւեան

- ՈՒՕԹՐԹԱՌԻՆԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ
- Տիկին Փարիգ Ստեփանեան
- Տիկին Նագիլի Էֆսիւզեան

- ՆԻԻ ԵՈՐԳԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ
- Գէորգ Դանիէլեան
- Մարտիրոս Գրիգորեան


- ՈՒՍՏՐԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ
- Տիգրան Էֆէֆեան

- ՖԻԼԱՏԵԼՖԻՈՑ ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ
- Կարապետ Թաշեան

- ԼՕՍ ԷՆՃԷԼԸՍ-Ի ՄԱՍՆԱՃԻՒԴԷՆ
- Սարգիս Կօշկարեան
- Ստեփան Տիմեան

- ՈՒՕՔԷԿԸՆԻ ՄԱՍՆԱՃԻՒԴ
- Թադէոս Հետիցեան

- ԼԻՕՆ (ՖՐԱՆՍԱ)Ի ՄԱՍՆԱՃԻՒԴ
- Յակոբ Բարեջանեան
- Գէորգ Կիլիսաւեան



619 75

Բացառաւոր էին Պոսթոնի ձիւնիւր Լիկի եւ Շիքակոյի Մասնահիւղերէն պատգամաւորներ:

Հայրենակցական ընկերութիւններէ ներկայ էին

- ԽԱՐԲԵՐԻ ԿՐԹԱՍԻՐԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
- Գարեգին Տիւլկերեան
- Պաղտասար Աւագեան

- ՀԻԻՍԷՑՆԻԿԻ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
- Մելիոն Ռստիկեան
- Ահարոն Նուրիկեան

- ՔԷՍԻՐԻԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
- Մարտիրոս Տէր Յովհաննէսեան
- Յակոբ Ճորճորեան

- ԲԱԶՄԱՇԷՆԻ ՈՒՍՈՒՄՆ. ԸՆԿԵՐՈՒԹ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
- Յովակիմ Նիկոլոսեան
- Դաւիթ Տէրվիշեան

- ՓԷՐՉԷՆՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
- Սարգիս Թորիկեան
- Խաչատուր Քիլերեան

Բացառաւոր էին Իջմէի Ուսումնասիրաց Ընկերութեան, Քոռփէի Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութեան, Մեծկերտի Ուսումնասիրաց Ընկերութեան եւ Վերի Խոյի Ուսումնասիրաց ընկերութեան ներկայացուցիչները:

Որով ժողովին կը մասնակցէին՝ 14 պատգամաւորներ մասնահիւղերէ եկած, 10 պատգամաւորներ Հայրենակցական Ընկերութիւններէ եկած, 3 ձայն Կեդրոնէն, ընդամէնը 27 ձայն:

Ժողովին ներկայ էր Նոր Կիւրինի շինութեան ընդհանուր ներկայացուցիչ Պրն. Լեւոն Հեքիմեան, որ վերջերս այցելած էր Հայաստան եւ հետեւաբար Նոր Խարբերդ եւ Նոր Խարբերդի հողամասին վրայ կառուցուող Նոր Կիւրին: Իր ակննատեսի պատմութիւնն ըրաւ եւ տեղեկութիւններ տուաւ ընդհանուր շինարարութեան շուրջ: Յատկապէս յիշեց Նոր Խարբերդի հողին եւ դիրքին առաւելութեան եւ նպաստաւոր պարագաներուն մասին: Շեշտեց յատկապէս ուժ տալ Նոր Խարբերդի գիւղատնտեսական աշխատութեան, որ միջոց պիտի դառնայ այդ նորակերտ անուններու արագ աճումին եւ ապրուստի ալ հնարաւորութիւն պիտի տայ:

— Ժողովուրդներու եւ անոնց հաւաքական եւ գործակցական աշխատութեան շնորհիւ, ըսաւ, շատ աւելի արդիւնք կարելի է ձեռք բերել: Նոր Խարբերդի մէջ կը շինուի մէկ միլիոն ըուպլի արժող «Կուլտուրական Կեդրոն» անունով շէնքը, որ Նոր Խարբերդի եւ անոր դրացի բոլոր աւաններու համար պիտի դառնայ զարգացման եւ լուսաւորութեան զօրաւոր կեդրոն մը: Այդ շէնքը մօտ ժամանակէն կ'աւարտի եւ պիտի դառնայ առաջնորդող հաստատութիւն մը:

Պր. Հեքիմեանի տեղեկութիւնները եւ թելադրութիւնները մասնաւոր հետաքրքրութեամբ ունկնդրուեցան ներկաներու կողմէն:

Ժողովը դարձեալ իրաւասութիւն տուաւ դիւանին ընտրել 3-ական անձերէ բաղկացեալ 3 յանձնախումբեր, որոնք նշանակուեցան հետեւեալ կերպով.—

Հարցերը դասաւորելու համար  
Պրնք. Մելքոն Ռատիկեան  
Մարտիրոս Գրիգորեան  
Սարգիս Թորիկեան

Հաշուեքննիչ Յանձնախումբի համար  
Գարեգին Տիւլկէրեան  
Յովակիմ Նիկողոսեան  
Կարապետ Թաչճեան

Ընտրողական Յանձնախումբի համար  
Տիգրան Էքմէքճեան  
Գէորգ Կիւլխասեան  
Յարութիւն Խօլլիկեան

Հարցեր դասաւորող յանձնախումբը բերաւ իր հարցերը եւ ժողովը ստացաւ իր կանոնաւոր ընթացքը: Բերուած հարցերն էին.—

- 1.— Նախորդ Պատգամաւորական ժողովի արձանագրութեան ընթերցում.
- 2.— Կեդրոնական Գործադիր Մարմնոյ տեղեկատուութիւն.
- 3.— Գանձապահին կողմէ հաշուետուութիւն.

4.— Յանձնախումբի ընտրութիւն.

Ա.— Հարցեր դասաւորող  
Բ.— Հաշուեքննիչ  
Գ.— Ընտրական

- 5.— հարց.— Մասնահիւղերու եւ Օժանդակող Ընկերութիւններու գեկուցում.
- 6.— Նախ Խարբերդի մէջ 10 նոր տուներ կառուցանելու հարց.
- 7.— ՀՕԿ-ի նախաձեռնութեամբ Փարիզի մէջ գումարուած ընդհանուր Համագումարին մասնակցելու հարց.
- 8.— Միջ-Հայրենակցական Միութեան հարց.
- 9.— Պարբերաբար շարունակութեան հարց.
- 10.— Գործիչի հարց.
- 11.— Ներգաղթի հարց.
- 12.— Գալիֆ Պատգ. Ժողովի տեղն եւ ժամանակը որոշել.
- 13.— Նախ Կեդրոնական վարչութեան ընտրութիւն.

Ժողովիս Ատենադպիր Յովհաննէս Նահիկեան կարդաց նախորդ Ութերորդ Պատգամաւորական ժողովի արձանագրութիւնը առ ի տեղեկութիւն եւ հարցերու մասին տրուած որոշումներ առ ի վերջիշում: Լուսարանութեան համար եղան մէկ քանի հարցումներ, որոնք լուսարանուեցան Կեդրոնի անդամոց կողմէ:

4.— Կեդրոնի տեղեկատուութիւնը դրաւոր տուաւ Կեդրոնի Քարտուղար Պրն. Գէորգ Կիւլխասեան, որ մանրամասնօրէն տուաւ 17 ամիսներու գործունէութեան լրիւ մէկ պատկերը: Մի առ մի թուեց Կեդրոնական վարչութեան թափած անխոնջ եւ կորովի ջանքերը նոր մասնաճիւղեր կազմելու: Մասնաճիւղերու հետ կանոնաւոր թղթակցութիւններ կատարելու եւ յաճախ անձնական այցելութիւններով անոնց գործունէութեան թափ մը տալու նպատակով: Թուեց նաեւ իրենց որոշ ջանքերը արտասահմանեան տարբեր շրջանակներու մէջ՝ ինչպէս Ֆրանսա, Հարաւային Ամերիկա եւ մինչեւ հեռաւոր Սիւրիա: Ծեշտեց յատկապէս իրենց կանոնաւոր կապ եւ յարաբերութիւն պահելն Նոր Խարբերդի մէջ մեր ներկայացուցիչներու

Հետ, որոնց ցուցմունքով եւ թելադրութեամբ կը ղրկուին Ամերիկայէն՝ արժէքաւոր եւ կարեւոր առարկաներ:

Տեղեկատուութեան մէջ նկատուեցաւ որ այս տարի երկու կտակակատարներ, որոշ գումարներով եւ նպատակներով օժանդակած են Նոր Խարբերդի շինարարութեան: Նիւ Եորքէն Պր. Գառնիկ Բիւրէճեանի յիշատակին եւ անոր անուան նուիրուած տուն մը շինելու համար կազմուած է յանձնախումբ մը, որ 1200 տոլար լրացնելու մօտ է: Նաեւ Պոսթոնարնակ եւ նորոգ հանգուցեալ Պր. Մկրտիչ Թաշճեան 650 տոլար կտակած է Նոր Խարբերդի շինարարութեան: Այս առթիւ Կեդրոնը շեշտեց այս ուղղութեամբ մասնաւոր աշխատութիւն թափելու պարագան յաջորդ տարուան ընթացքին:

Տեղեկատուութեան մէջ յատկապէս յիշեց Պր. Յակոբ Բարեջանեանի յօժար եւ սիրով աշխատութիւնները Ֆրանսայի շրջանին մէջ կատարած փրօփականտի տեսակէտէ, ուր ան առանց վճարումի ու կամովին այցելած է Ֆրանսայի մէջ կազմուած մասնաճիւղերը, խրախուսած եւ քաջալերած է իրենց գործունէութիւնները եւ նոր եռանդ արթնցուցած անոնց մէջ: Պարբերաթերթ մը հրատարակելու մասին աշխատած են լաւ եւ խնամքով պատրաստուած ընդարձակ պրօշիւր մը հանել, ներգաղթի համար դիմած եւ աշխատած են Ներգաղթի Ընդհանուր Վարիչ Քաղաքացի Ծահլէյրտեանի հաստատել տալ ներգաղթողներու խոշոր ցանկ մը, որուն իրրեւ արդիւնք այս տարի Նոր Խարբերդ գաղթած են 79 անձինք:

Պրն. Կիւլիսասեան իր ընդարձակ եւ խնամով պատրաստած տեղեկագիրը վերջացուց կարգ մը թելադրութիւններով յաջորդ շրջանի գործունէութեան համար, որպէսզի նոր տուներու շինութիւնը աւելի ուժգին թափով յառաջ տարուի եւ փոխանակ 10 տուներու՝ շինուին 20-25 տուներ: Թէ՛ գործիչ մը պահել անհրաժեշտ է, այս շրջանակը բուն իսկ կազմակերպելու եւ յաճախակի այցելութիւններ տալու զանազան մասնաճիւղներու եւ շրջաններու: Թէ թերթ մը հրատարակել եւ կամ պրօշիւր մը պահել ժողովուրդին տեղեկացնելու համար մեր եւ Նոր Խարբերդի շինարարութիւնը, անհրաժեշտ է նաեւ ուժ տալ ներգաղթի:

Ժողովականները լարուած ուշադրութեամբ մտիկ ըրին տեղեկագիրը եւ լրանալուն՝ ծափերով գնահատեցին Կեդրոնական Վարչութիւնը ընդհանրապէս եւ Քարտուղար Պրն.

Գէորդ Կիւլիսասեանի անխոնջ աշխատութիւնը մասնաւորապէս:

5.— Գանձապահ Պրն. Յարովթիւն Սօլլիկեան իր մանրամասն հաշիւը պատրաստած եւ տպել տուած էր որ բաժնուցաւ բոլոր ներկաներուն. մասնաճիւղերու հաշիւներն ճիշտ էին: Բացատրութեան համար եղան մէկ քանի հարցումներ, որոնք դանձապահին կողմէ բացատրուեցան:

Հետեւեալն է ընդհանուր հաշուեկշիւը, որ Հաշուեքննիչ Յանձնախումբը մանրամասնօրէն քննեց եւ անոր ճշգրտութիւնը վաւերացուց:

(Հաշուեկշիւը կարգաւ 16 եւ 17-րդ էջերուն մէջ):

7.— Պատգամաւորներու եւ ներկայացուցիչներու Ձեկուցում.— Մասնաճիւղերու պատգամաւորներ առանձին առանձին, ոմանք դրաւոր եւ ոմանք ալ բերանացի՝ ժողովին հաղորդեցին իրենց շրջանի գործունէութեան տեղեկութիւնները եւ ձեռք բերած նիւթական յաջողութիւնները: Նկատուեցաւ որ այս տարի մասնաճիւղեր առ հասարակ աւելի գործունէութիւն ունեցած են եւ Միութեան մեծ չափով օժանդակած են: Ամէնքն ալ խոստացան յաջորդ շրջանին աշխատիլ աւելի կորովով եւ եռանդով, նոր տուներու շինութիւնները փութով զլուխ հանելու համար:

Դիւանին կողմէն հրաւիրուեցաւ քաղաքացի Յակոբ Բարեջանեանը, որ Նոր Խարբերդ այցելած էր վերջերս եւ իր աչքերով տեսած էր նոր կատարուած շինարարութիւնները՝ տեղեկութիւն տալ Նոր Խարբերդի մասին: Քաղաքացի Բարեջանեան բաղդատուութիւն մը ըրաւ Նոր Խարբերդի հողին, դիրքին, արդիւնաբերութեան միջոցներուն եւ ունեցած կարեւոր առաւելութիւններուն եւ Նոր Խարբերդի դրացի միւս աւաններուն նկատմամբ, յիշեց Նոր Խարբերդի հողին ընդարձակութիւնը, Երեւանի, ընդհ. Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքին չափազանց մօտ գտնուիլը, նաեւ Հայաստանի նրկաթուղային գծին եւ ընդհանուր ճանապարհին մօտ գտնուիլը, նաեւ Երեւանի մաքուր ջուրէն օգտուելու առաւելութիւններու մասին: Նոր Խարբերդ այս առաւելութիւններու պատճառաւ ունի ելեքորականութիւն եւ խմելու մաքուր ջուր:

Նոր Խարբերդ ունի ընդարձակ դետին այգեմշակութեան

եւ ծառամշակութեան համար, որոնք մեծ չափով անկուած են ու երբ քանի մը տարիէն այդ այգիներն ու ծառերը արդիւնք տան, նիւթապէս պիտի նպաստեն Նոր Խարբերդի նիւթական բարձրութեան, գինեգործութեան եւ թօնալըվայի գործին բերած արդիւնքովը: Նոր Խարբերդ ունի բազում հնարաւորութիւններ եւ առաւելութիւններ, որ միւս գրացի աւանները չունին եւ այդ պատճառաւ Նոր Խարբերդ աւելի ընդարձակութեւն, մեծնալու եւ ինքնարաւ դատնալու մեծ յոյս եւ հեռանկար կայ: Թելադրեց որ մէկ քանի տարի արտասահմանի Խարբերդցիներ մեծ ջանքով օժանդակին: Ծնորհակալութեամբ եւ ուրախութեամբ լսուեցան քաղաքացի Բարեջանեանին տեղեկութիւնները եւ ականատեսի իր տպաւորութիւնները: Ժամը ուշացած ըլլալով որոշուեցաւ երեք քառորդ ժամի դադար մը տալ, ճաշի, հանգստի եւ ընտրուած դանազան յանձնախումբերու իրենց աշխատութեանց պարապելու համար: Ժողովը որոշուեցաւ վերսկսիլ ժամը 4-ու կէսին:

#### ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Ժամը 4.30-ին ժողովին երկրորդ նիստը բացաւ Ատենապետ Պրն. Իանիէլեան եւ Ատենադպիր Յովհաննէս Նահիկեան կարդաց առաջին նիստի արձանագրութիւնը եւ փոքր փոփոխութենէ վերջ ժողովը վաւերացուց:

Կարդացուեցաւ Հայաստանէն մեր ներկայացուցիչ Քաղաքացի Միսաք Մազմանեանէ եկած հեռագիրը, որ կը շնորհաւորէր մեր ժողովը եւ յաջողութիւն կը մաղթէր: Ժողովը ծափահարութեամբ լսեց Ներկայացուցիչ Մազմանեանի բարեմաղթութիւնները:

9.— 10 Նոր Տուներ Շինելու Խնդիր.— Այս հարցին հետ միացուեցաւ նաեւ Կեդրոնի նախաձեռնութեամբ 25 հազար տոլար հանգանակութիւն մը բանալու հարցը 10 աւելի նոր տուններ շինելու համար: Եղան դանազան թելադրութիւններ խոշոր գումար մը ձեռք բերելու համար. հանգանակութիւն, վիճակահանութեան թիճէթներ, մրցանակաւոր վիճակահանութիւն եւ դանազան տեսակ հասոյթարեր միջոցներ առաջարկուեցան եւ թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան ներկաներու կողմէն, թելադրուեցաւ նաեւ Ամերիկայի դանազան մասնաճիւղերու եւ օժանդակ ընկերութիւններու եւ անհատ անձ-

նաւորութիւններու գիւմել իրենց մասնաճիւղի, գիւղի կամ անձի անունով տուններ շինելու: Ասոր դէմ բերուած առարկութիւններէ վերջ ժողովը 13 քուէով ընդունեց բանաձեւ մը որ Համա-Խարբերդցիական Միութիւնը, Կեդրոնի նախաձեռնութեամբ, պատրաստէ 10 հազար տոլար արժող նուիրատուներ եւ ծախէ Ամերիկայի ամէն շրջանի Խարբերդցիներուն մէջ եւ անկէ դոյացած դրամը յատկացնէ 10 տուններու շինութեան: Որոշեց նաեւ գիւմել անհատ անձնաւորութիւններու, մասնաճիւղերու եւ օժանդակող ընկերութիւններու որպէս զի ջանան իրենց անունով նոր տուններ կառուցանել Նոր Խարբերդի մէջ:

11.— ՀՕԿ-ի նախաձեռնութեամբ Փարիզի մէջ գումարուած ընդհանուր համադադութեան պատգամաւորական ժողովին ներկայացուցիչ մը կամ աւելի ղրկելու հարցին շուրջ, նախ կարդացուեցաւ ՀՕԿ-ի կեդրոնէն եկած հրաւեր-ճամակը, որմէ հասկցուեցաւ որ այդ ժողովին պիտի մասնակցին Պետական Կարմիր Պաշ, ՀՕԿ, հայրենակցական, վերաշինական դանազան ընկերակցութիւններ՝ Ամերիկայի եւ արտասահմանի դանազան շրջաններէն, որուն մէջ մասնաւոր ուշադրութիւն պիտի տրուի ներդադթի եւ շինարարութեան նման խիստ կարեւոր եւ այժմէական խնդիրներու:

Նկատուեցաւ որ ամէն միութիւն կրնայ մասնակցիլ ժողովին իւրաքանչիւր 200 անդամին մէկ ներկայացուցիչով:

Այս կանոնով մեր Միութիւնը կրնայ ժողովին մասնակցիլ 4-5 կամ աւելի ներկայացուցիչներով: Ժողովը թեր ու դէմ կարծիքներ յայտնեց Ամերիկայի շրջանակէն ներկայացուցիչ ղրկելու եւ կամ Փրանսայի շրջանակէն ներկայացուցիչներ նշանակելու մասին: Կարծիքներու փոխանակութենէ վերջ որոշուեցաւ առնուազն մէկ ներկայացուցիչ ղրկել Ամերիկայի շրջանէն եւ մնացեալները ընտրել Փրանսայի շրջանէն: Նրկատի ունենալով որ Միութեանս հին եւ կարող անդամ, նաեւ կեդրոնի անդամ Պրն. Մաղաք Պէրպէրեան ուրիշ ժողովի մը մասնակցելու պաշտօնով արդէն Փարիզ պիտի գտնուի, անոր ներկայութիւնը օգտաւործելու համար որոշուեցաւ դրել իրեն որ կից իր ժամանակն ու գործերն կը թուլատրեն՝ մեր կողմէն իրրեւ լիազօր ներկայացուցիչ մասնակցի ՀՕԿ-ի ընդհանուր համադումարին: Որոշուեցաւ ընդհանուր ծախքի համար որոշել միայն 300 տոլարի պիւտճէ մը եւ ոչ աւելի:

\* Մասնաճիւղերէ ներկայացուած մասնաւոր քեկնածուներէն կեդրոնական վարչութիւնը իրաւունք պիտի ունենայ մէկ պատգամաւորի ընտրութիւն կատարել: Պրն. Յարութիւն Խօլիկեանի անունը առաջարկուեցաւ ու ժողովը միաձայն հաւանութեամբ ընտրեց. գայն Ամերիկայի շրջանէն լիագոր պատգամաւոր: Մնացեալ անդամներն պիտի նշանակուին Փրանսայի շրջանէն:

Միութեանս Պօսթընի Մասնաճիւղը այդ իրիկունն ի պատիւ պատգամաւորներու պատրաստած էր ճաշասեղան մը Հայց. Առաքելական Սբ. Երրորդութիւն Եկեղեցւոյ Մրահը: Ճաշի ժամանակ լինելով՝ Պատգամաւորական ժողովը որոշեց երթալ ճաշի եւ մնացած հարցերը լրացնել ճաշէն վերջ: Այս որոշման համաձայն ժամը 7-30-էն մինչեւ 9-30 ճաշի յատկացուեցաւ:

Երկրորդ նիստի վերջին մասը սկսաւ ժամը 9-30ին Ազգային Գրադարանին մէջ: Մնացեալ հարցերն էին.

Միջ-Հայրենակցական Հարց.

Պարբերաքերթի Շարունակման Հարց.

Գործիչի Հարց.

Ներգաղթի Հարց.

Գալիք Պատգ. ժողովի տեղը եւ քուականը.

Նոր կեդրոնական վարչութեան Ընտրութիւն.

Միջ-Հայրենակցական Հարց.— Այս առթիւ կարգացուեցաւ Լօս-Անճէլոսէն եկած հեռագիր-շնորհաւորական նամակ մը Միջ-Հայրենակցական Միութիւն անունով, Armenian Reconstruction Union of Los Angeles որ կը կազմեն Խարբերդի, Քղիի, Հաճընի, Վասպուրական եւ Սըվաղի Միութիւնները. կը շնորհաւորէին մեր Միութեան Գրք Պատգամաւորական ժողովը եւ կը թելադրէին Արեւելքի շրջանի Հայրենակցականներու եւ Միութիւններու գործակցութիւնը՝ վերաշինական եւ ներգաղթի խնդիրներու շուրջ: Կեդր. վարչութեան անդամները հաղորդեցին որ Նիւ Եորքի մէջ ալ կազմուած է զանազան Հայրենակցականներէ՝ այս նպատակաւ միովութիւններ, ուստի թելադրեց որ Պատգ. ժողովը այս մասին խորհրդածութիւն մը կատարէ: Պատգամաւորներ ամէնքըն ալ գործնական, օգտակար եւ անհրաժեշտ նկատելով որոշեցին իրաւունք տալ նորընտիր Կեդրոնական վարչութեան

այս կարգի ձեռնարկներու եւ կոչերու ընդառաջ երթալ բոլորանուէր ջանքերով:

Պարբերաքերթի շուրջ եղան զանազան կարծիքներ եւ արտայայտութիւններ: Ամէնքն ալ զնահատեցին այս կարգի թելադրի մը եւ կամ պրօշիւրի մը հրատարակութիւնը: Նկատելով սակայն որ Միութեան համակիր թերթեր արդէն իսկ Միութեան վերաբերեալ լուրերը եւ տեղեկութիւնները կը հրատարակեն իրենց ժամանակին, ուստի յարմար նկատուեցաւ եւ որոշուեցաւ տարուան շրջանին երկու պրօշիւր հրատարակել լաւ եւ խնամով պատրաստուած, զանազան լուրերով, տեղեկութիւններով եւ լաւ յօդուածներով, որու ծախուց ի հաշիւ որոշուեցաւ միայն 400 տողար տարեկան:

Գործիչի Խնդիրը սկզբունքով անհրաժեշտ եւ օգտակար նկատուեցաւ բոլոր պատգամաւորներու կողմէն: Ոմանք ջատագովեցին մնայուն գործիչ մը ունենալու առաւելութիւնը, իսկ ոմանք ալ որոշ շրջանի համար: Որոշուեցաւ 1250 տողար քուէարկել գործիչի մը համար եւ թողուլ Նորընտիր Կեդրոնական վարչութեան գործադրութեան:

Ներգաղթի Խնդիր.— Ներգաղթը անհրաժեշտ եւ ստիպողական է, ձայնեցին բոլոր պատգամաւորները: Յատկապէս որոշուեցաւ որ այս ուղղութեամբ ամէն հնարաւոր դիմում կատարուի Խորհրդային Հայաստանի կառավարութեան մեր ներկայացուցիչներուն եւ ներգաղթի ամէն պաշտօնական մարմիններու, որպէս զի արագացուի ներգաղթը, որուն պատճառաւ հնարաւոր պիտի ըլլայ նիւթական նպաստ ձեռք բերել:

Գալիք Պատգամաւորական ժողովը.— Նիւ Եորքէ եղած փափաքին եւ առաջարկին համաձայն, որոշուեցաւ Նիւ Եորք գումարել, իսկ ժամանակը թողուեցաւ նորընտիր Կեդրոնական վարչութեան: Թելադրուեցաւ որ նկատի առնուի երկու յաջորդական հալիւտէյ ըլլալու օրերը: Այս որոշումէն վերջ Հաշուեցնիչ Յանձնախումբը կարգաց իր քննած հաշիւներու վաւերացումն:

Ընտրողական Յանձնախումբը բերաւ 21 անուններէ բաղկացեալ ցանկ մը, որուն վրայէն գաղտնի քուէարկութեամբ Կեդրոնական վարչութեան անդամ ընտրուեցան:

Մուշեղ Աճէմեան	25	քուէ
Գէորգ Կիւլիսսեան	23	»
Յարութիւն Ոսլիկեան	21	»
Յովհաննէս Նահիկեան	18	»
Թաղէոս Հետիցեան	15	»
Յովակիմ Նիկողոսեան	14	»
Միհրան Գզիրեան	14	»
Մարտիրոս Տէր Յովհաննէսեան	13	»
Յակոբ Բարեջանեան	12	»
Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն էին՝		
Մաղաք Պէրպէրեան	10	»
Գրիգոր Համբարձումեան	10	»
Տիկին Էքսիւզեան	9	»
Տիգրան Էքմէքճեան	8	»
Միհրան Կօշկարեան	8	»
Յարութիւն Գասապեան	6	»
Յակոբ Ճորճորեան	6	»
Մելքոն Ռստիկեան	5	»

Ժամանակը շատ ուշացած էր, մանաւանդ հեռաւոր տեղերէ եկող պատգամաւորներ կ'աճապարէին իրենց տեղերը մեկնել, ուստի որոշուեցաւ շնորհաւորական նամակներ եւ հեռագիրներ զրկել Պորհրդային Հայաստանի կառավարութեան, Աբ. Գուլոյեանին. Պորհրդային Միութ. Նախ. Մօլթոֆին. ՀՕԿ-ի և ներգաղթի ընդհանուր նախագահ Արսէն Եսայեանի. որոնց հեռագիրները կը գտնէք ստորեւ. մեր ընդհանուր ներկայացուցիչ Քաղաքացի Միսաք Մալմանեանի եւ Յանձնախումբի միւս անդամներուն: Որոշուեցաւ զնահատութիւն յայտնել Կեդրոնական Վարչութեան, Ժողովի ղեկանին եւ առհասարակ բոլոր անձանց ու մարմիններուն, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակած են Համախորհրդակցական Միութեան այս հսկայ եւ շինարար ու վսեմ գործին: Ժողովականներ գոհ եւ ուրախ տրամադրութեամբ մեկնեցան Ժողովէն յայտնելով աւելի մեծ խանդավառութիւն նոր շրջանի համար:

Ի Դիմաց՝

ՀԱՄԱԽՈՐՀԱԿՐԵՐԴՅԻԱԿԱԿՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ատենադպիր՝

ՅՈՎՀ. Ս. ՆԱՀԻԿԵԱՆ

Ատենապետ՝

Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՂՐԿՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պորհ. Միութիւն

Մօսկուա, Ռուսիա

Նախագահ Մօլթոֆ,

Համա-Պարբերդցիական Միութեան Իններորդ Համաժողովը, գումարուած Պոսթոն, Հոկտ. 11, 1936-ին, իր բոլոր մասնաճիւղերու պատգամաւորներով խորապէս կը գնահատէ ձեր եղբայրական հոգածութիւնը, որ Պորհ. Միութիւնը տըւած է մեր եղբայրներուն, Սովիէթ Հայաստանի մէջ:

Համաժողովի ատենապետ՝

Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Գուլոյեան, Նախագահ Պորհ. Հայաստանի,

Երեւան

Համա-Պարբերդցիական Միութեան Իններորդ Համագումարը՝ գումարուած Պոսթոն, 1936, Հոկտ. 11-ին, իր բոլոր մասնաճիւղերով եւ օժանդակող ընկերութիւններով կուզայ իր խոր երախտադիտութիւնը յայտնել ձեր միջոցաւ մեր կառավարութեան, որ հայրական հոգատարութեամբ իր թեւերուն տակ առաւ մեր ներգաղթող եղբայրները:

Ատենապետ Համագումարի՝

Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Եսայեան, Նախագահ ՀՕԿ-ի եւ ներգաղթի

Երեւան

Համա-Պարբերդցիական Միութեան Իններորդ Համագումարը գումարուած 1936, Հոկտ. 11-ին, Պոսթոն, իր բոլոր մասնաճիւղերով եւ օժանդակող ընկերութիւններով կուզայ իր խոր շնորհակալութիւնը յայտնել ձեր ջանքերուն եւ բարոյական օգնութեան, որով կարող եղան ներգաղթողները ապաստան գտնել մեր հայրենիքի թեւերուն տակ:

Ատենապետ՝

Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ



**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ**

ՇՐՋԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ (1935 Մայիս 5—1936 Հոկտ. 11)

Յարգելի պատգամաւորներ՝

Բացման այս գեղեցիկ ու քաջալերական խօսքերէն վերջ, նախ կուգանք մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնելու մեր բոլոր Մ-ճիւղերուն, Կրտսերաց Լիկին, Հայրենակցական Միութեանց, ինչպէս նաեւ անհատ Սարբերդցիներու, որոնք ուժ տուին մեզի անցնող 17 ամիսներու ընթացքին: Կեդրոնական Վարչութիւնս կը շնորհաւորէ ձեզ բոլորդ եւ ի սրտէ կը բաղձայ յաջողութիւն ձեր աշխատութեանց:

Պատգամաւորական ժողովները ունին իրենց որոշ կատարելիքները, ուստի կը խնդրենք ամէն մէկ պատգամաւորէ որ հարցերուն մօտենայ դիտակցաբար վերլուծելու անկողմնակալ կերպով եւ քուէարկելու աղատ եւ անկաշկանդ մտածելակերպով:

Ըսելիքներ չատ, խօսելիքներ ալ աւելի չատ, բայց մեր ըսելիքները պիտի կրճատենք լոկ այն պատճառաւ որ անցնող 17 ամիսներու ընթացքին չատ խօսեցանք, եւ թերեւս շատերու ալ սրտնեղութիւն պատճառեցինք, պարտականութեան հրաւիրելով զիրենք: Ուստի այս յառաջաբանէն վերջ պիտի անցնինք մեր գործունէութեան շատ կարճ եւ կարելի եղածին ամփոփ կերպով:

Ինքնագովութիւն չէ որ պիտի ընենք, այլ պիտի պարզենք ձեզի թէ ի՞նչ ըրած է Համա-Սարբերդցիական Միութեան Կեդր. Գործադիր Մարմինը այս շրջանին: Քննադատութենէ չէ որ կը վախնանք եւ ոչ ալ պարսաւանքէ, այլ կ'ուզենք որ իրերը եւ իրողութիւնները սրտբաց եւ անկեղծ Սարբերդցիներու նման վեր առնենք:

Այս շրջանը, որ սովորականէն աւելի երկար եղաւ, վարեցին հետեւեալները.—

- |                     |              |
|---------------------|--------------|
| Մուշեղ Աճէմեան՝     | Ատենապետ     |
| Մաղաք Պէրպէրեան՝    | Փ. Ատենապետ  |
| Յարութիւն Գասապեան՝ | Փ. Ատենադպիր |
| Գէորգ Կիւլխասեան՝   | Ատենադպիր    |

- |                     |               |
|---------------------|---------------|
| Յարութիւն Խօլիկեան՝ | Գանձապահ      |
| Միհրան Գղիբեան՝     | Սորհրդական    |
| Թադէոս Հետիցեան     | »             |
| Ահարոն Գէորգեան     | »             |
| Յակոբ Բարեջանեան՝   | »             |
| Սարգիս Կօշկարեան՝   | Պատուոյ անդամ |

Մեր Նիւ Եորքի ներկայացուցիչն էր Գէորգ Դանիէլեան, Ս. Հայաստանի ներկայացուցիչն էր Միսաք Մազմանեան:

Մեր դրամական բոլոր գործառնութիւնները կատարուեցան Սորհրդային Հայաստանի Պետական Պանդային եւ First National Bank of Boston-ի հետ:

Նոր Սարբերդի մէջ Հաւաքական Տնտեսութեան անդամներն են հետեւեալները.—

- |                                    |                 |
|------------------------------------|-----------------|
| Արամ Յակոբեան՝ Նախագահ             | (Հիւսէյնիկցի)   |
| Արտաշէս Թաւրիզեան՝ Քարտուղար       | (Քաղաքացի)      |
| Դաւիթ Ղարիպեան՝ Հաշուապահ          | (Բարչանճցի)     |
| Յովհաննէս Գաբրիէլեան՝ Սորհրդական   | (Մեծկերտցի)     |
| Կարապետ Տատեխեան՝ Սորհադական       | (Սոյլուցի)      |
| Սարգիս Մկրտիչեան՝ Վերստուգիչ անդամ | (Մեծկերտցի)     |
| Կիրակոս Մուսճեան՝                  | » (Մեղիրցի)     |
| Խոսրով Մանուկեան՝                  | » (Չարսանճազցի) |
| Պետրոս Արզումանեան՝ Ակտիվից        | (Երզմենիկցի)    |
| Յարութիւն Մկրտիչեան՝               | » (Սոյլուցի)    |
| Մարինոս Մկրտիչեան՝                 | » (Մեծկերտցի)   |
| Աղասի Գույումճեան՝                 | » (Մեծկերտցի)   |

Ինչպէս կը տեսնէք, թէ՛ հոս Ամերիկայի մէջ եւ թէ՛ հոն՝ Նոր Սարբերդի Հաւաքական Տնտեսութիւնը նկատի առած է վայրկեանի մեծութիւնը եւ ընտրած է տարբեր գիւղերու ներկայացուցիչներ, գործը, որ սկսուած է, հաւաքաբար եւ հաւասար կերպով տանելու համար, եւ մեր բոլորի բաղձանքն ու փափաքը եղած է միանուագ կերպով առաջնորդուիլ վաղուան է՛ն փառաւոր եւ գեղեցիկ Նոր Սարբերդը կերտելու համար, որ փառք ու պատիւ է մեզ բոլոր Սարբերդցիներուս համար:

# Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ

## ՀԱՄԱՆԱԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ

1935, ՄԱՏԻՍ 5-ԷՆ ՄԻՆՉԵՒ ՀՈՒՑ. 10, 1936

### ՄՈՒՏՔ

1935, Մայիս 5, նախորդ Շրջանին փոխանցում	5.086.55
ՊԷՆԷՏ մեզի սրումը ֆրետիք	11.56
Նիւ Խորի Մամանիւղէն ստացած ենֆ.—	
Մայիս 6, 1935	140.00
Սեպտ. 6, 1936	100.00
Մարտ 24, 1936 Գառնիկ ֆիւրէնեան ֆընտ	500.00
Յուլիս 15, 1936 Գառնիկ ֆիւրէնեան ֆընտ	300.00
Պարտքի Մամանիւղէն ստացած ենֆ.—	
1935, Մայիս 7	100.00
1935, Հոկտ. 20	700.00
1935, Դեկտ 2, Մարգրիտ Գրեգորեանի ֆլս. Ծղկ.	21.00
1936, Ապրիլ 20, Յ. Նալպանտեանի ֆլս. Ծղկա.	24.50
1936, Հոկտ. 8, Արք. Մամեցեանի ֆլս. Ծղկ.	80.00
1936, Հոկտ. 8, Մամանիւղէն	650.00

### Լու Աճեղքի Մամանիւղէն ստացած ենֆ.—

Ապրիլ 20, 1936	150.00
Յունիս 10, 1936	100.00
Վաճեղքի Մամանիւղէն ստացած ենֆ.—	
Նոյեմբեր 23, 1935	100.00
Սեպտեմբեր 8, 1936	80.00
Շիֆալոյի Մամանիւղէն ստացած ենֆ.—	
Ապրիլ 20, 1936	80.00
Յունիս 10, 1936	20.00
Յունիս 10, 1936, Մարգարեանի ֆլս. Ծաղկեպսակէն	50.00

### Ֆիլատելիայի Մամանիւղէն Մեյ. 20, 1936

ՄԷՖԻԿՅՈՅ Մամանիւղէն ստացած ենֆ.—	
Սեպտ. 25, 1935	96.25
Յունիս 2, 1936, Ա. Նալպանտեանի ֆլս. Ծղկա.	60.00
Խարբերի կրք. Ընկ. Փրավտ. Ման. Յունվ. 10, 1936	90.31
Բազմաշէնի Լուս. Ուսմ. Ընկ. Օգոստ. 7, 1936	1200.00
Լիւնի Մամանիւղէն, Ֆրանսա, Օգոստ. 23, 1935	100.00
Յունուար 10, 1936	66.00

### Վալալուի Մամանիւղէն, Ֆրանսա, Սեպտ. 6, 1935

Վարդապետի Մամանիւղէն, Հոկտ. 10, 1936	65.00
Մկրտիչ Ա. Թաշեանի կտակէն, Պարտք	35.00
Նուր Մաղաֆ Պերպէրեանէ	653.46
ԸՆԴՀ. ՍՈՒՏՔ	25.00
ԸՆԴՀ. ՍՈՒՏՔ	10,741.55

### Ամբարի Բոլ կը մնայ

Չարլսթաուն Թրքսի Բոլ (Գրցում պէնֆ)	89.62
Զբ գանձում երկու չէքս	330.10
	22.20

### ՍԼՔ

1935 Մայիս 8, ՊԷՆԷՏ \$1000-ի չէֆի փոխման. Ծախս	12.50
» » » նամակագրում եւ քէլեֆոս	1.53
» » » Յայտարարութիւն եւ Տպգր. «Պայէար»	65.00
» » » » շանարծիւս. Մ. Պերպէրեան 1932-35	50.00
» » » » Տպգրք. եւ երկու բէճեքըր նամակ	3.02
Յուլիս 16 1935 Տպգրք. եւ հեռագրիւններու հաշիւն վն.	35.00
» 30 «Պայէար» յայտարարք. եւ սրանի վարձ	22.20
» 30, 1935 «Նոր Օր» քէքսի յայտարարք.	8.00
» » » «Բանադոյին յայտարարութեան	11.00
Յուլիս 31, 1935, Մ. Տեր Յովհաննէսեան նամարու Ծախս	3.15
» » » Միհրան Գրիբեան, նամարու Ծախս	3.78
» » » Թաքէնու Հէտիցեան, նամարու Ծախս	4.00
» » » Տպգրք. եւ հեռագրիւններու առ հաշիւ	20.54
Օգոստ. 1, 1935 Ամբարիկի, Ֆորտ Բրքէր-մը հաշիւն	700.00
» 27 » Ամբարիկի միջոցով Հայաստան դրվ.ծ. 1000.00	
» » » Հ.Բ.Ը.Մ. (Տրկ. Մ. Տեր Յովհան.)	112.50
» » » նամակագրումներու առ հաշիւ վն.	10.00
Հոկտ. 16, 1935 Տպգրք. Հեռագիր եւ Փոստարկի	31.00
» 22 » Ամբարիկի միջոցով Հայաստան դրվ.ծ. 500.00	
» » » ներգաղթողներու ամուսնացումներու	9.00
Դեկտ. 4, 1935 Ամբարիկի, Երկարդ Բրքէրի համար	800.00
1936 Փետր. 23, Ե. Հայաստ. 15րդ. Յար. Յանձնար.	10.00
Մարտ 10, 1936 նամակագրումներու եւ 2 կնիք	14.00
» » » Հեռագիր, 3 Տնտեսի եւ Փոստարկի	11.85
» » » կամուսնագրի տպգրք. համար	32.56
» » » Զորս անգամ ժողովարարի վարձ	8.00
Ապրիլ 20, 1936 Շրջարեպան, Փոստարկի, քք.	17.50
» » » Հ.Բ.Ը.Մ. նոր հարբերդի համար	3000.00
1936 Մայիս 21 «Նոր հարբերդ» պարբերիկի ի հաշիւ	100.00
Յունիս 3, 1936 ներգաղթողներու Յանկերու համար	14.20
Յունիս 11, 1936, 15 քքեր «Նոր հարբերդ» համար	50.00
» » » Մաղկեպսակի համար Մահակեանի վն.	5.00
Յուլիս 23, 1936 Ֆրանսայի Շրջանի նամարու Ծախս	25.00
» 24 » Ի հաշիւ «Նոր հարբերդ» քքերի տպգր.	32.00
» » » 2 ժամացոյց Հայաստան դրվ.ծ. եւ հեռգ.	14.83
Օգոստ. 3, 1936, Ի հաշիւ «Նոր հարբերդ» տպգրք.	200.00
Օգոստ. 6, 1936, Թ. Հեռից. եւ Մ. Գրիկ. նամարու Ծախս.	6.00
» » » նամակագրումներու ի հաշիւ վն.	10.00
» 25 » ՀՕԿ-ին, Երկարդ Ֆորտ Բրքէրի համար	900.00
Սեպտ. 22, 1936, Ֆրանսայի Շրջանի նամարու Ծախս	31.00
Հոկտ. 1, 1936, ժողովարարի վարձ 4 անգամ	8.00
» » » Յ. Գասպարեանի նամարու Ծախս	11.00
» » » Թ. Հէտից. եւ Մ. Գրիկ. նամարու Ծախս	2.00
» » » Շրջարեպան, նամարու, Փոստարկի	11.27
» 10 » Հօրէի Պրէտիքտու (Համագումար)	10.00
ԸՆԴՀ. ՍԼՔ	7,935.70
ՊԱՏՐԱՍԻ ԳՈՒՄԱՐ	2,805.85
	10,741.55

Գանձապահ

1936, Հոկտ. 10	ՅՐԹ. ԵՕԼԼԻԿԱՆ
Պարտք, ՄԷՍ.	



619-75

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ

Գասսպար Միմոնեան՝	Ատենապետ	(Հապուռեցի)
Պօղոս Նալպանդեան՝	Ատենադպիր	(Չմշկածաղցի)
Մարգիս Ծիրանեան՝	Գանձապահ	(Քէսիբիկցի)
Լեոն Ահարոնեան՝	Խորհրդական	(Մորենիկցի)
Նշան Թէպոյեան՝	Խորհրդական	(Հապուռեցի)

Մեր առաջին վարչական ժողովը գումարուեցաւ Մայիս 22, 1935-ին ներկայութեամբ նախորդ վարչութեան ատենադպրին, ուր փոխանցումներ տեղի ունեցան: Առաջին ժողովին իսկ հրատարակուեց ղեկավարութեան, այլեւայլ պատճառաւորութեամբ: Կազմուեցաւ ղեկանը եւ հրատարակուեց տեղ նորեր հրահրել որոշուեցաւ եւ գործին ընթացք տրուեցաւ անմիջապէս:

Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր

Հակառակ անոր որ վարեցինք երկար շրջան մը, ունեցանք միայն 8 լիակատար նիստեր, որոնց իւրաքանչիւրին ալ հրահրուեցան մեզի օժանդակող Միութեանց ներկայացուցիչները, ունեցանք 30-է աւելի ղեկանական ժողովներ, ուր ընթացք տրուեցան Կեդրոնի գծած և թելադրած խնդիրներուն, առանց յապաղման:

Դիւանական գործերը, որոնք կրկնապատկուեցան եւ կըրնանք համարձակութեամբ ըսել թէ նոյն իսկ քառապատկուեցան, սիրայօժար կերպով կատարուեցան: Թելադրութիւնները կատարեցինք օրը օրին եւ նամակներուն պատասխանեցինք կատարեալ ճշգրտագոյնութեամբ: Այցելութիւններ տուինք այն Մ-ճիւղերուն եւ Հայրենակցական Միութիւններուն, որոնք ղեկավար կատարած էին յատկապէս: Իսկ այն վայրերուն մէջ ուր ստուար թիւով Խարբերուցիներ կային շատ աշխատեցանք Մ-ճիւղեր հիմնել՝ մասամբ մեր գործը ղեկարգնելու եւ շինարարութիւնը կատարելագործելու եւ արագացնելու մտադրութեամբ: Շատեր արձագանգ տուին մեր կոչին, իսկ ոմանք ձանձրութիւն չստանձնեցին երկտողով մը իսկ պատասխանելու մեր նամակներուն:

Այս շրջանին հրապարակ հանեցինք երեք շատ կարեւոր շրջաբերականներ, որոնք տուին իրենց արդիւնքը:

Մեր ժողովներուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ մեզ օժանդակող ընկերութիւնները: Անոնք ներկայ եղան եւ մեզի հետ որոշումներ անցուցին եւ քուէարկեցին՝ բացառութիւնները յարգելով:

Բացի մեզ օժանդակող Միութիւններէն կան դեռ շատ մը ուրիշ Հայրենակցականներ, որոնք հեռու կը մնան տակաւին մեզմէ ալ եւ այլ պատճառաւորութեամբ: Ասոնցմէ ոմանց հետ նամակացած, անձամբ տեսնուած եւ խորհրդակցութիւններ կատարուած են: Կ'արժէ կրկին անգամ որոշ յանձնախումբերու միջոցաւ ղեկավար կատարել եւ մօտէն հետաքրքրուել անոնց հեռու մնալուն պատճառները հասկնալու համար: Այն ընկերութիւնները որ այսօր դուրս կը մնան այլ եւ այլ պատճառաւորութեամբ, այլեւս պատճառ մը չունին, քանի որ անոնք հաւատար ձայն եւ ներկայացուցիչ կ'ունենան Կեդր. Գործադիր Մարմնի ժողովներուն մէջ եւ ամէն ինչ բոլորի գիտութեամբ եւ հաւանութեամբ կը կատարուին: Այլեւս ժամանակը եկած է եւ կ'ակնկալենք որ ամէն Հայրենակցական Միութիւն իր որոշ եւ պատուոյ աթոռը դրաւէ Համա-Խարբերուցիականին մէջ եւ իր հայրենակիցներու անուան տուն մը կամ հաստատութիւն մը չինէ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ մէջ:

Կարգ մը հետաքրքրութիւն ցուցնող գիւղական ընկերութիւններու հետ յարաբերութեան մէջ մտած ենք եւ վստահ ենք որ անոնք եւս պիտի կապուին մեզի շուտով. անոնցմէ ոմանց տրամադրութիւնները լաւ էին:

Այս շրջանին մէջ ճիշդ ու աշխատանք չինայեցինք, Հայաստանէն եկած կոչերը, նամակները, պաշտօնական գրութիւնները, Նոր Խարբերուցի վերաբերող եւ շահեկանութիւն ունեցող գրութիւնները տպագրելով ամէն շրջան ղրկեցինք, որոնք նաեւ տուին իրենց արդիւնքը: Շատեր այս փաստաթուղթերը տեսնելով հետաքրքրուեցան եւ բերին իրենց օժանդակութիւնը թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳԾՈՎ. — Հակառակ մեր բաղձանքին, ինչպէս նաեւ նախորդ պատգամաւորական ժողովի բաղձանքին չկրցանք ակնկալուած ծառայութիւնը տալ այս շրջանին, պարզ այն պատճառով որ, չկրցանք վճարովի գործիչը ունենալ, գէթ որոշ ժամանակի մը համար: Այս առթիւ պատահութիւնն ունեցանք անձամբ տեսնուելու Վահէ Հայկին հետ, որ իր անհատական գործով այս կողմերը կը գտնուէր. ընկերը ներկայ

եղաւ մեր պաշտօնական ժողովին, Սեպտ. 11, 1935, տուաւ լայն բացատրութիւններ եւ տեղեկութիւններ, եւ յայտնեց որ Գալիֆօրնիա մեծ դաշտ կայ Համա-Սարրերդցիականին համար. խօստացաւ իր կարելի միջոցներով օգտակար ըլլալ ըսկըսուած գործի յաջողութեան համար: Արդէն Կեդր. Վարչութեան սեղանին վրայ կար Գալիֆօրնիոյ շրջանին համար գործիչ մը ունենալու հարցը. ըստ Պր. Վահէի տուած հաւաստիացումին եւ խոստման կարծեցինք որ այդ հարցը մասամբ լուծուած էր, բայց կը ցաւինք ըսելու որ ընկերը ոչ միայն չօժանդակեց, այլ նոյն իսկ մեր կրկնակի գրած նամակներուն չի պատասխանեց, պատճառը մինչեւ այսօր անորոշ կը մնայ մեզի:

**ԱՅՍ ՇՐՋԱՆԻՆ** ուրիշ շատ մը կարեւոր գործերու հետ երեւան բերինք ծրագիր-կանոնագիր մը Անգլերէն յաւելուածով, պահանջը շատ մեծ էր եւ կարեւոր, աճող Մ-ճիւղեր առանց ծրագրի չէին կրնար գործել: Աւելցուցինք նաեւ Պատգամաւորական Ժողովներու մէջ տրուած յաւելուածական յօդուածները, ըստ նախորդ Պատգ. Ժողովի որոշման, եւ ունեցանք ամփոփ ծրագիր-կանոնագիր մը:

**Մ-ՃԻՒՂԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.**— Մեր կարողութեան ներած չափով Զանացինք նոր Մ-ճիւղեր կազմել եւ ունեցած Մ-ճիւղերուն հետ ալ սերտ յարաբերութիւն մշակել. շատերու մէջ հետաքրքրութիւն ստեղծեցինք, ինչպէս կը տեսնուի անոնց բերած նիւթական եւ բարոյական օժանդակութենէն: Ունեցանք նորակազմ Մ-ճիւղեր, որոնց անունները կ'արժէ յիշել հոս:

**Ա. ՈՒՕԹՐԹԱՈՒՆ.**— Դիւանը ներկայ եղաւ անոնց ժողովին եւ տուաւ լայն բացատրութիւններ: Ունեցաւ իր երկսեռ Մ-ճիւղը որուն վարչութեան անդամներէն շատերը կ'ինքն են: Քաջալերական է:

**Բ. ՃԻՒԱՏԵԼՃԻԱ.**— Կազմուեցաւ շնորհիւ Պրն. Համբարձում Սիմոնեանի եւ կարճ ժամանակէն արձադանդ տուաւ մեր կողմէն դրական կերպով: Լաւ յոյսեր ունինք անոնց վրայ եւ մեծ ակնկալութիւններ: Ըստ իրենց հաւաստիացումին ապագային մեր ամենալաւ Մ-ճիւղերէն մին պիտի ըլլայ ան:

**Գ. ՍԱՆՓԱՎԼՈ.**— Հարաւային Ամերիկա՝ որոնք ամէն դիւրութիւն տուած են մեզ, տրամադրութիւնները լաւ են:

Իսկ Ֆրանսայի շրջանը ունինք լաւ Մ-ճիւղեր, որոնք հետեւեալներն են.— Լիօն, Վալանս, Վիէն, Տէսին, Ֆօնտ Ապրնայ եւ ուրիշներ: Եւ այս վերջերը Մարսէլ:

**Մ-ՃԻՒՂԵՐՈՒ ԹԻՒՂ.**— Մեր ունեցած Մ-ճիւղերու թիւն է 17. Թէ՛ հոս եւ թէ՛ արտասահման, որոնք կը ներկայացնեն իսկական Համա-Սարրերդցիական Միութիւնը:

Մ-ճիւղերու գործունէութեան վրայ շատ պիտի չձանրանանք, քանի որ անոնք ունին իրենց ըսելիքները՝ իրենց բերած տեղեկութեան մէջ: Առանց վարանելու կուգանք ըսելու որ անոնք ըրած են ինչ որ կրնային ընել, տուած են այնքան մը օժանդակութիւն որքան որ իրենց սահմանները ներած է: Մեր ունեցած Մ-ճիւղերէն ունէ մէկին դէմ ըսելիք չունինք, քանի որ իրենց կարելին ըրին եւ մեզի օժանդակեցին: Ուստի սոյն Պատգամաւորական Ժողովին կ'իյնայ դնահատել անոնց գործունէութիւնը: Բոլորի տրամադրութիւնները Համա-Սարրերդցիականի մասին եղած է լաւ եւ քաջալերական:

**ԱՅՍ ՇՐՋԱՆԻՆ ԳՐԱԾ ԵՆՔ 198 ՆԱՄԱԿՆԵՐ** հայերէն իսկ 12 հատ անգլերէն, որոնք դրուեցան գանձապահին դործատեղիին մէջ եւ անոր թիւադրովեամբ առանց վճարումի. չընորհակալութիւն Օրիորդին եւ ընկերոջ տարած աշխատանքներուն համար: 120 հատ ժողովի քարտեր եւ նամակներ: Բաւական թիւով թերթերու յայտարարութիւններ:

Այն մասնաճիւղերը, որոնց բոլորի հետ ալ կապ պահեցինք օրինաւոր կերպով՝ հետեւեալներն են.— Պօսթըն, Նիւեորք, Լօս-Անճելըս, Շիքագօ, Ուօթկըն, Ֆիլատելֆիա, Ուստր, Ուօքսթաուն, Պօսթըն ձիւնիլըր Լիկ, Մեքսիկօ, Սան Փալլօ, իսկ Ֆրանսայի շրջանը՝ Լիօն, Վալանս, Վիէն, Տէսին, Ֆօնտ Ապրնայ եւ Մարսէլ:

Մ-ճիւղերու բերած նիւթական հաշիւները առանձին մաս կը կազմեն գանձապահի տետրակին մէջ, որ գանձապահը իր տպագրած հաշիւկէտը ձեռք կը ներկայացնէ սոյն ժողովին մէջ:

**ՄԵՐ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ Մ-ՃԻՒՂԵՐՈՒ ԵՆ.**— Պրօքլիօ, Լիօն, Լօվէլ, Հէվրիկ, Հարք-Փըրտ, ու վերակազմուելու ճամբուն վրայ են Ֆրէգոն եւ Քօրուօպա, ասոնց՝ որպէս կատարեալ Մ-ճիւղ, զրկեցինք մեր բոլոր շրջաբերականները, թիւադրու-

Թիւնները եւ նոյն իսկ Պատգ. Ժողովի հրաւիրադիրը:

Սոյն վայրերուն մէջ Մ-ճիւղեր կաղմելու եւ կամ վերահաղմելու համար դիւանս ամէն միջոց մտածեց լաւագոյնօրէն՝ Մ-ճիւղեր կաղմակերպել, այդ առթիւ գրեցինք տասնեակ մը նամակներ տեղւոյն վրայ եղող լաւագոյն անձնաւորութիւններու: Վստահ ենք որ մօտիկ ապագային մեր աշխատանքները իրենց արդար պտուղը պիտի տան, եթէ յաջորդ Կեդր. Վարչութիւնը փոքր աշխատանք մը տանի այս մասին:

ԱՅՍ ԾՐՁԱՆԻՆ Թէեւ որոշ քէմիէյն չբացինք, բայց Մ-ճիւղերու եւ Հայրենակցականներու վրայ գօթանք հանեցինք, եթէ այս գօթանքը իսկապէս իրականանային, այն ժամանակ պիտի ունենայինք 20,000 տոլար, որով եկած բոլոր պահանջներուն գոհացում պիտի կրնայինք տալ: Այս գօթային պատասխանողներ շատ քիչեր եղան, միայն Հայրենակցականներէն Բագմաշէնը որ ըստ իրենց պատգ. Ժողովի որոշման արդէն քուէարկած էին 5000 տոլար ի նպաստ Նոր Խարբերդի շինարարութեան, որուն 1200 տոլար իրենց գօթայի բաժինը ժամանակին յանձնած են Կեդր. Վարչութեան զանձապահին: Վստահ ենք որ սկսուած տասը բնակարաններու շինարարութիւնը ղեռ չաւարտած արդէն միւսն ալ տուած կ'ըլլան:

Բաղմաշէնի Լուս. Ընկերութեան առած այս գեղեցիկ քայլը զնահատութեան արժանացաւ:

ԿՏԱԿՆԵՐ.— Այս շրջանիս ունեցանք մաս մը գումարներ, որոնք ուրախութեամբ կ'արձանագրենք այս էջերուն մէջ: Տոքթ. Յովնան Թաշճեանի ձեռամբ ստացանք 653-46 տոլարի գումար մը որ հանդուցեալ Պր. Մկրտիչ Թաշճեան կտակած էր իր մահէն առաջ Նոր Խարբերդի շինութեան համար:

Ստացանք նաեւ տան մը շինութեան համար կանխավճար 800.00 տոլարի գումար մը (մնացեալը շուտով լրացնելու պայմանաւ), Նիւ Եորքէն Գառնիկ Քիւրէճճեան յանձնախումբէն. ասոնց համար շնորհակալութիւններ ունինք ի սրտէ: Այս ննջեցեալներու անունները արձանագրեցինք մեր ոսկեմատեանին մէջ:

Սէնթ Լուիզէն ստացանք նամակ մը Սեպտ. 3, 1935-ին Պետ. Կարմիր Սաչէն, որ կը տեղեկացնէր մեզ Պետրոս Յովհաննէսեան անունով Խարբերդի մը կտակը, գրեթէ 4000

տոլար գումար մը: Այս մասին քանի մը նամակներ գրեցինք եւ հետապնդեցինք: Մեր Թափած աշխատանքները ասպարդիւն ելան, քանի որ Հ. Բ. Ը. Միութիւնը կանխաւ ապահոված էր յիշեալ գումարը: Բարեգործականէն որեւէ բան չի լսեցինք ղեռ, միայն անոր թողուցած գումարին տոկոսը պիտի յատկացուի մեզ եղեր, ըստ ԷՄԻԻՅՔԵՐԵՐԻ ԸՐԱԾ յայտարարութեան:

Ինչպէս կը տեսնէք այսպիսի խոշոր գումարներ կարելի է ասպահովել, եթէ մասնաւոր աշխատանք տարուի:

ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ.— Փոխան ծաղկեպսակի հանգանակութիւնները, որ ժամանակաւոր կերպով դադար առած էին չափաւոր կերպով վերսկսան, այս կը ցուցնէ որ եթէ որոշ աշխատանքներ տարուելու ըլլան մեր Մ-ճիւղերուն կողմէն, կրնանք ամէն պարագայի մեզ ինկած բաժինը ունենալ: Կ'արժէ որ այս մասին որոշ ուշադրութիւն դարձնէ այս Պատգամաւորական Ժողովը: Հսկայ դաշտ կայ Խարբերդիներու համար ամէն դժի վրայ, պէտք է օգտագործենք, պէտք է գործենք մեր սրտին ու հոգիին մօտ եղող այս գեղեցիկ նպատակին՝ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինութեան համար:

ԱՅՍ ՏԱՐԻ Ֆրանսայի շրջանը բոլորովին նոր կեանք ըստացաւ: Այնտեղի պահանջը եւ Մ-ճիւղերու շատնալը պատճառ եղաւ որ ունենանք Ծրջանային Վարչութիւն մը: Անոնք ունեցան իրենց առաջին պատգամաւորական Ժողովը, որ տրուաւ իր որոշ արդիւնքը:

Անոնք տուին օժանդակութիւն ներգաղթի խնդրոյ մէջ՝ տալով մեզ ամէն դիւրութիւն: Անոնք Թէեւ չկրցին տալ մեր ակնկալած նիւթական օժանդակութիւնը, բայց անոնց տուած բարոյական աջակցութիւնը զնահատութեան արժանի է: Անոնք տուին ամէն օժանդակութիւն եւ ընդունելութիւն ընկ. Յ. Բարեջանեանի՝ Ֆրանսայի շրջանը գտնուած պարագային. այս կէտը գովասանքի արժանի է:

Ի կարգին է հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնները յայտնել ընկ. Յ. Բարեջանեանի, որ առանց դժկամակելու յանձն առաւ դիւանի առաջարկը եւ մեր թելադրութեան համաձայն այցելութիւններ տուաւ, դասախօսութիւններ եւ Ժողովներ սարքեց Ֆրանսայի մեր Մ-ճիւղերուն համար եւ մանաւանդ մեզի օգնեց մեզ շատ զբաղեցնող եւ մտահոգող

Մարտիլիոյ Եր. Միութեան խնդրոյն մէջ: Մարտիլիոյ Երկսեռ Միութեան հետ երկար բանակցութիւններ կատարեցինք, ամէն խոստում ըրին, բայց երբ խնդիրը անուան փոփոխման եկաւ դժկամակեցան ու շարունակեցին առանձինն գործել: Մեղի հետ հաւասար աշխատանք տարաւ նաեւ Ֆրանսայի Երջ. Վարչութիւնը: Անոնք նոյն իսկ ներկայ եղան Փետր. 8, 1936-ի Պատգամաւոր. Ժողովին, բայց ի դուր, անոնք անփոփոխ մընացին եւ շարունակեցին անջատ գործել:

Ենորհիւ Յ. Բարեջանեանի տուած ազդու բացատրութիւններուն կարողացանք զանոնք մեղի կապել մասամբ: Եթէ կ'ուզեն որ Նոր Խորհրդի շինարարութեան ստատրեն Մարտիլիաբնակ Խորհրդացիները, պէտք է որ քալին միայն եւ միայն Համա-Պարբերոցիական գծով: Ուրախ ենք ըսելու որ ընկ. Բարեջանեանի ցանած սերմերը սկսան արդիւնք տալ: Ասկից մի քանի օր առաջ ստացանք նամակ մը Մարտիլիոյ Երկ. Հայրենակցական Միութիւնէն, որոնք փափաք եւ որոշում անցուցած են մեղի միանալու եւ պատասխանի կ'սպասեն: Մեր վաւերացումէն վերջ, մեզի հետ պիտի գործակցին եւ պիտի սատարեն Նոր Խորհրդի վերելքին: Այս առթիւ անմիջապէս գրուեցաւ Ֆրանս. Երջ. Վարչութեան, գործին ընթացք տալու համար: Զարմանալի պիտի չըլլայ որ կարճ ժամանակի մէջ Մարտիլիա գրաւէ իր առաջնակարգ դիրքը, քանի որ մեր քաղած տեղեկութեանց համաձայն, Մարտիլիա ունի հսկայ դաշտ եւ մեծ թիւով Խորհրդացիներ կը գտնուին հոն:

ՈՒՂՂԱԿԻ ՓԱՐԻՉԻ մէջ կը գտնուին մաս մը կարող Խորհրդացիներ, որոնք նաեւ Յ. Բարեջանեանի խոստացած են իրենց ուժը տրամադրել հարկ եղած պահուն, այդ անձինքն են՝ Սեդրաք Գարեան, Ռափայէլ Զարգարեան, Գառնիկ Մումճեան, Յովհ. Տէր Յովհաննէսեան, Զաքար Փափազեան եւն.:

ՃԻՒՆԻՂՐ ԼԻԿ, ՊՕՍԹԸՆ.— Թէեւ իրենց ղեկոյցը կրնայ ըլլալ որ տան այս ժողովին, բայց կ'արժէ մի քանի խօսք ըսել անոնց մասին: Պօսթընի ձիւնիւր Լիկը, որ իր սկզբնաւորութեան օրերուն հսկայ քայլերով յառաջանալ սկսաւ, այսօր իր թափը կ'որոտած է եւ թոյլ կը շարժի: Բնական է որքան յանցաւոր են անոնք, նոյնքան եւ աւելի յանցաւոր ենք մենք, որովհետեւ անոնց պէտք եղած հողածուծիւնը չի կրցինք տալ, անոնք ղեռ պզտիկ են եւ սովորի կ'ուզեն եւ մեր վրայ խոշոր պարտք կայ անոնց առաջնորդելու, ձեռնարկները քաջալերե-

լու եւ ուղղութիւն տալու: Անոնք կը նմանին նաւու մը որ առանց ֆիքընի կը ճամբորդէ, անոնք նաւավարի պէտք ունին եւ պէտք է որ տանք անոնց ատիկա, անոնք մեր ապագայ յոյսը եւ մեր արժանաւոր յաջորդները պիտի ըլլան: Թէեւ նիւթական ուժ չտուին մեզ այս տարի, բայց անոնց տուած բարոյական ուժը մեծ եղաւ: Ամէն ժամանակ օժանդակած են Պօսթընի Մ-ճիւղի ձեռնարկներուն:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԽՐԿԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆ.— Խ. այստանի 15-րդ տարեդարձի առթիւ Նիւ Եորքի Մ-ճիւղի կողմէն դիմում եղաւ Համա-Պարբերոցիականի կողմէն ներկայացուցիչ մը խրկելու: Ժամանակի կարճութիւնը ամենամեծ պատճառը դարձաւ որ չկրնանք խրկել մեր լիազօր ներկայացուցիչը, բայց վերջին բողոքիին Ֆիլատէլֆիայէն Համբ. Սիմոնեան յանձն առաւ սիրայօժար կերպով մեզ ներկայացնել:

Ընկերը իր պատգամէն դատ նաեւ բերաւ մարմարեայ կաղամարի սէք մը որպէս նուէր Համա-Պարբերոցիականի կեդր. Վարչութեան:

Մի քանի բառով բացատրենք թէ ինչու համար ժամանակը կարճ էր, այս մասին կ'արժէ բացատրութիւններ տալ, որմանց մտքերուն վրայ թողուցած տպաւորութիւնները փարատելու համար:

Կեդր. Վարչութիւնը իր նախնական շրջանին այնքան մը զբաղած էր ստեղծուած քառասոյնի վիճակէն դուրս գալու համար, որ ներկայացուցիչ խրկելու պարագան բոլորովին զանց առած էր ժամանակաւոր կերպով: Երբ Նիւ Եորքի Մ-ճիւղէն ներկայացուցիչ խրկելու առաջարկը եկաւ արդէն շատ ուշ էինք, խրկելիք ներկայացուցիչին վիզէ իսկ ապահովելու համար, բայց ասոր հետ մէկտեղ անոնք առաջ գացին ըսելու որ, իրենք կրնան շուտով վիզէ ապահովել եթէ մենք միայն հաւանութիւն տանք ներկայացուցիչ մը խրկելու, որուն բերած արդիւնքը շատ մեծ արժէք պիտի ներկայացնէ եւն.:

Կեդր. Վարչութիւնը սակայն, որպէս Մ-ճիւղերու կողմէն ընտրուած մարմին մը, չուզեց զրկանք ընել միւս Մ-ճիւղերուն որոնք այս մասին անտեղեակ կը մնային, ուստի չուզեց մեղադրանքի դուռ բանալ:

Կ'արժէ որ այս պատգամաւորական ժողովը վերանկատուութեան առնէ այս հարցը եւ այսօրուրնէ իսկ տայ եւ որոշէ իր ներկայացուցիչը յարմար պարագային զրկելու համար:

«ՊԱՐՔԵՐԱԿԱՆ»-Ի ՄԱՍԻՆ.— Խնդիր մը որ նկատառութեան պէտք ունի. անոնք որոնք ունեցած են մեր հրատարակած «Նոր Խորհրդ» պարբերաթերթը, քիչ շատ տեղեակ են անոր հրատարակութեան պատճառներուն: Բայց անոնք որոնք կարդացած չեն, կ'արժէ այս մասին ըսել մի քանի խօսքով թէ ինչո՞ւ Կեդր. Վարչութիւնը հրատարակեց այս ծախսալից պարբերաթերթը եւ չի կրցաւ շարունակել ուրիշ թիւերու հրատարակութիւնը: Սկզբնաւորութեան երբ այս գաղափարը երեւան բերուեցաւ դիւանի մէկ ժողովին մէջ, մեր նպատակը միայն փոքրիկ պրոչիւր մը հանել էր, անանկ որ երբ Կեդր. Վարչ. Ժողովին մէջ բերուեցաւ այս գաղափարը՝ քուէարկուեցաւ միայն հարիւր տոլարի գումար մը շոկ փրփականդի համար:

Երբ միւս օրն իսկ խօսքէն գործի անցանք, այն ժամանակ տեսանք որ մեր ձեռքին մէջ ունեցած կոչերը, նամակները, Նոր Խորհրդի Հաւաքական Տնտեսութեան հաշիւները՝ պիտի չկրնայինք հրատարակել՝ սահմանուած գումարի նուազութեան պատճառաւ: Այս պարբերականին նպատակը այն պիտի ըլլար որ Հայաստանէն եկած նամակները, կոչերը, շինարարութեան վերաբերեալ մեր ունեցած գործառնութիւնները, տեղական Մ-ճիւղերու կեանքէն առնուած լուրերը, հաշիւները, նշանախօսութեան, ամուսնութեան եւ մահերու նկարագրութիւնները հրատարակել: Դիմում կատարեցինք անդամներու եւ ծանօթ Խորհրդակցիներու, որպէս զի տան մեզ իրենց օժանդակութիւնը, Պարբերաթերթը յաջող գործ մը ընելու համար: Կը ցաւինք ըսելու սակայն, որ տրուած խոստումները ամիսներ օրօրեցին մեզ, որու պատճառաւ Պարբերաթերթը փոխանակ Յունիս 15-ին հրատարակ գալու, Օգոստոս 1-ին երեւան եկաւ:

Սակայն այս ամէն դժուարութիւններէն վերջ վերջապէս կրցինք երեւան բերել պարբերական մը, որ վստահ ենք թէ տուաւ իր որոշ եւ դեղեցիկ ծառայութիւնը, շատեր, որոնք անտարբեր կը շարժէին Նոր Խորհրդի շինարարութեան շուրջ, այս օրերուն որոշ հետաքրքրութիւն ցոյց տուին: Ուրախ ենք ըսելու որ թէ եւ ոչ բոլորովին լրիւ այլ սիրուն գործ մը կրցինք երեւան հանել, մեզ հասած շատ մը քաջալերական նամակները ասոր կենդանի ապացոյցներն են: Ձանանք որ այս Պատգ. Ժողովին որոշմամբ ստեղծենք պարբերական թերթի խմբա-

գրական կաճառ մը, որ փոխանակ տարին մէկ օրինակ հանելու՝ ջանանք ամիսը թիւ մը հանել՝ Անդլերէն բաժինով, թէ՛ մեր նոր սերունդը քաջալերելու եւ թէ՛ զանոնք գործի մղելու համար:

ՆԵՐԳԱՂԹ.— Կեդր. Վարչութիւնը բաւական երկար եւ դժուարին աշխատանքներ տարաւ նաեւ ներգաղթի շուրջ՝ առանձինն դիմում կատարեցինք մեզ օժանդակող բոլոր ընկերներուն եւ անուանացանկերու համար, թերթերու միջոցաւ մի քանի անդամ ծանուցինք: Նկատելով որ ներգաղթը պիտի կատարուէր Փրանսայէն՝ բերինք անոնց անուանացանկը եւ ամէնը միասին ղրկեցինք Փրանսա՝ Դանուշ Ծահվերտեանի, ներգաղթի Կեդր. Վարչութեան: Ժամանակ մը եկաւ որ նոյն իսկ կասկածեցանք թէ մեզ հանուած թիւը պիտի չի կրնանք լրացնել, բայց վերջի պարագային այնքան մը շատցաւ ներգաղթողներու թիւը որ տարբեր իրականութեան մը առաջ գտնուեցանք եւ հաղիւ հազ կրցանք 78 անձինք ղրկել, բընակարաններու պակասին պատճառաւ: Մեզ յատկացուած ներգաղթի թիւը 130 էր, ինչպէս քանի անգամներ ծանուցինք թերթերով եւ շրջաբերականներով բնակարաններու պակասը ինչպէս նաեւ արագ աճող բնակիչներու (թիւը պատճառ դարձան խոստացուած թիւը չլրացնելու: Այս մասին որոշ եւ կանատեսի ծանօթութիւններ ստացանք ընկ. Յ. Բարեջանեանէն: Ծատեր նեղուեցան, նոյնպէս եւ աւելի շատ նեղուեցանք մենք նախօրօք ըրած մեր յայտարարութեան համար, բայց ո՛չ նեղուելու եւ ոչ ալ բարկանալու եւ ցաւելու պէտք ունինք քանի որ Համա-Խորհրդակցական Միութիւնը ներգաղթողներու համար մէկ սէնթ չտուաւ. կառավարութիւնը իր ծախքով տարաւ մինչեւ Նոր Խորհրդը, երկու շաբաթ գեղեցիկ կերպով յարգել, պատուել վերջ: Այս առթիւ մեր յարգանքն ու երախտապարտութիւնները կը յայտնենք մեր կառավարութեան:

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԳՏՈՎ.— Նոր Խորհրդի աշխատառնութիւնը 1935-ի վերջերը իր ընդհանուր Խորհրդակցական ժողովին մէջ վճռեց դուրս գալ Խորհրդային տնտեսութենէն եւ կազմել հաւաքական տնտեսութիւն մը: Հայաստանի կառավարութիւնը ընդառաջ երթալով եղած առաջարկին, վաւերացուց եւ անոնց յատկացուց մաս մը դրամ եւ մաս մը եւս հողամաս, ուր կան արդէն մշակուած 16 հեկտար պտղատու ծա-

ներ եւ այդինքն: Պտղատու ծառերուն թիւն է 2800. խաղողի որթերու թիւն է 32,000:

Շնորհիւ աշխատաւոր ձեռքերու Նոր Խարբերդը պիտի շինուի, բարգաւաճի եւ մօտիկ ապագային Հայաստանի Գալիֆորնիան պիտի կոչուի:

**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ ՂՐԿԱԾ ԵՆՔ**

Ապրիլ 19, 1935, հեռագրաւ	1000.00
Օգոստ. 1, 1935, Ֆօրտ սիւտէմ մը	700.00
Օգոստ. 1, 1935, հեռագրաւ շինարարութեան	1000.00
Հոկտ. 22, 1935, շինարարութեան	500.00
Յունուար 2, 1936, 1¼ քրմնոց Ֆօրտ քրք մը	800.00
Ապրիլ 29, 1936, Հ. Բարեգործ.ի միջոցաւ դրկած ենֆ	3000.00
Օգոստ. 25, 1936-ի ՀՕԿ-ի Ամեր. Երջանի միջոցաւ	900.00
1½ թըննոց Ֆօրտ Թրըքի համար Ընդամէնը՝	<hr/> \$7900.00

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾՈՎ.** — Տարիներով մեկ շատ մտահոգող խնդիրը վերջնականապէս վերջացաւ այս տարի, ջուրի խողովակներու եւ էլեքտրական սարքաւորումներու խնդիրն էր:

Այս մասին շատ պիտի չծանրանանք, անոր համար որ իրատենին շրջաբերականով եւ նամակներով բոլոր Հայրենակցականներու եւ Մասնաճիւղերու իմացուցած ենք: Նոր Խարբերդի բնակչութիւնը շատ մը ուրիշ բաներու հետ միասին կը վայելէ Երեւանի նշանաւոր խմելու ջուրը իր բոլոր գործածութեան համար, եւ ամէն տուն ու փողոց էլեքտրական լոյսով ողողուած է, շնորհիւ մեր կառավարութեան եւ ձեր աջակցութեան: Ասկից առաջուայ զրկուած ուժուալէքըը շնորհիւ էլեքտրականութեան՝ այսօր գործածութեան դրուած է:

**ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ** առաջին յարկը բոլորովին լրացած եւ գործածութեան դրուած է եւ վստահ ենք որ միւս մասն ալ շուտով պիտի լրանայ:

**10 ՆՈՐ ՏՈՒՆԵՐՈՒ ԽՆԻԻՐԸ.** — Հակառակ մեր ըրած բոլոր ջանքերուն՝ դարձեալ չկրցինք լրացնել մեզմէ պահանջուած

13,000 տոլար. դումարը որ 10 նորածեւ տուններու արժէքն է, բայց եւ այնպէս չի յուսահատեցանք, մեզմէ խնդրուած բոլոր դումարները իրենց ժամանակին հասցուցինք, բացի վերջին պահանջէն, չի զրկեցինք այն պատճառաւ որ այս Պատգ. Ժողովը որոշում տայ այս մասին եւ անոնց ակնկալած դրամը ամբողջութեամբ դրկէ: Ուստի պարտք կը դնենք մեր կողմէն որ սոյն Պատգամաւորական Ժողովը կարելի ամէն միջոցներով այսօր իսկ խոստումներ անէ ներկաներէն՝ շուտով լրացնելու համար այդ ակնկալուած դրամը որ բաղդատմամբ մեր թիւին շատ քիչ է: Փոխանակ 10 նոր տուններ շինելու պէտք է 25 տուններ շինելու որոշումով հրապարակ գանք այսօր իսկ: Հայրենակցականներ, որոնք ունին մաս մը դրամներ Ամերիկեան պանթաներու մէջ, արդեօք ո՞ր օրերուն համար է որ կը սպասեն. թող երեւան գան եւ իրենց գիւղին կամ քաղաքին անունով տուններ շինելու եւ իրենց զաղթականները ժամ առաջ հոն փոխադրելու որոշումը տան, որուն կարօտովը կ'այրին այս օրերուն օտար ամերիկացիներու վրայ: Հայրենակիցներ, այս օրերուն է որ անոնք պէտք ունին մեզի, վաղը շատ ուշ պիտի ըլլայ եւ նոյն իսկ մեր օգնութեան պէտքն ալ պիտի չունենան եւ իրենց գործերը կարգի դրուած պիտի ըլլան: Եարժէ՛ ո՞վ Խարբերդի, քանի անարգանքի սիւնին դամուած չես: Հիմա որ ամէնքս ալ համոզուած ենք թէ Նոր Խարբերդը այլեւս ճշմարիտ իրականութիւն մըն է. թերհաւատներ նոյն իսկ ասոր համոզուած են. ուստի կ'արժէ ամէն աշխատանք թափել ըսկըսուած գործը պատուով լրացնելու համար: Ամէն մէկ Խարբերդցիէ՛ շատ բան կ'ակնկալուի, յուսախար չընենք մեր ներկայացուցիչը եւ մեր կառավարութիւնը:

Ասկից մի քանի շաբաթ առաջ հեռագրով մը աւետեցին տասը նոր տուններու սկսիլը եւ մեզմէ դրամ պահանջեցին: Այս տուններուն մէկը պիտի շինուի վաղամեռիկ եւ Նիւ Եորքի վարչութեան ժրջան անդամներէն Գառնիկ Քիւրէճեանի անուամբ, որուն դրամը պատրաստ է: Ովքե՞ր պիտի շինեն միւս 9 հատը: Անհատ Խարբերդցիներու լաւ պատեհութիւն կայ որ իրենց սիրելիներուն անունը յաւերժացնեն: Ահա ասպարէզ:

**ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ** դիւանը որքան աշխատանք տարաւ կեդրոնին մէջ՝ նոյնքան եւ աւելի աշխատանք տարաւ Մ-ճիւղերու ձեռնարկներուն պահուն: Պոսթօնի Մ-ճիւղի ձեռնարկ-



ներուն մէջ զիւանի երեք անդամները որոշ դեր կատարեցին ամէն գծի վրայ:

**Մեր ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.**— Ամէն քաղաքի մէջ հիմնել եւ կամ վերակազմել Համա-Սարբերդցիականի Մ-ճիւղեր, այս ընել շատ եւ շատ կարեւոր է, քանի որ առանց մեքենայի գործ չենք կրնար արտադրել, անոնք մեր մեքենաներն են եւ պէտք է որ անպայման ունենանք:

**Բ.**— Գործիչ մը ունենալ շատ կարեւոր է, վճարելու պայմանաւ եւ ժամանակաւոր կերպով:

**Գ.**— «Նոր հարբերդ» պարբերականին հրատարակութիւնը շարունակել, լաւ հիմերով եւ կարող անձնաւորութեան մը ղեկավարութեամբ՝ Անգլերէն բաժինով:

**Դ.**— Տասը նոր տուներու դրամը գոյացնել եւ այսօր իսկ հեռագրել որ մենք իրենց կողքին կանգնած ենք:

**Ե.**— Հեռու մնացող Սարբերդի դաշտի Հայրենակցականներու անհատապէս դիմում կատարել, ոչ թէ նամակով:

**Զ.**— Տասը նոր տուներու շինութեան առթիւ հրապարակաւ մեծ ձեռնարկներ սարքել ամէն քաղաքի մէջ. պարահանդէսներ եւ կամ հացկերոյթ:

Այս թելադրանքները կ'ընենք այն վստահութեամբ որ երբ վերադառնանք մեր տեղերը՝ պիտի գործնականացնենք զանոնք:

Այն ատենն է որ յաղթութեան դրօշակը պիտի ծածանենք: Եւ այն ատենն է որ միասին պիտի կոչենք՝ կեցցէ՛ Սարբերդցին որ ապրիլ եւ ապրեցնել գիտէ:

\* \* \*

Կար ժամանակ մը որ Ամերիկահայ մամուլը մեզի կ'օժանդակէր, տրամադրելով իր թերթի էջերը, սակայն այս վերջերս միայն երկու թերթեր եղան որ իրենց աջակցութիւնը բերին Միութեանս զրկած ամէն մէկ գրութիւնները առանց դժկամակելու տպագրութեան յանձնեցին, որոնք էին «Բանուոր» օրաթերթը եւ Գալիֆորնիոյ «Նոր Ուղի»ն: Մեր մասնաւոր շնորհակալութիւնները:

**ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ.**—

1.— Մեր ամենամեծ երախտիքը կը պարտինք Ս. Հայաստանի կառավարութեան իր տուած նիւթական եւ բարոյական մեծ օժանդակութեան համար:

2.— ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան, մասնաւորապէս Ընկ. Արսէն Եսայեանին՝ իր տուած բոլորանուէր դուրգուրանքին եւ աջակցութեանը համար:

3.— Երախտապարտ ենք Երեւանի մեր ներկայացուցիչին՝ Ընկ. Մ. Մաղմանեանին, որ հակառակ իր շատ դրաղած ըլլալուն իր թանկագին ժամերը տրամադրեց մեզ տեղեակ պահելով իրադարձութեանց՝ առանց վճարումի:

4.— Հաւաքական Տնտեսութեան բոլոր անդամներուն, որ իրենց գործը տարին անթերի, ներկայացնելով մեզ մանրամասն հաշիւները՝ եղած շինարարութեան համար:

5.— Մեր հրապարակաւ շնորհակալութիւնները կը յայտնենք մեր Նիւ Եորքի ներկայացուցիչին՝ Գէորգ Դանիէլեանի, որ իր գործը շարունակեց յանձն առնելով ամէն զոհողութիւն: Ընկերը սիրալոյսով կատարեց իր պաշտօնը եւ օրը օրին պատասխանեց մեր նամակներուն:

6.— Նիւ Եորք, Գառնիկ Քիւրէճեան Յանձնախումբին, իրենց տարած խոշոր աշխատութեանը համար:

7.— Կրկին շնորհակալութիւններ ընկ. Համբարձ. Սիմոնեանին եւ ընկ. Յակոբ Բարեջանեանին, իրենց տարած զոհողութեանց համար: Մեր բոլոր Մ-ճիւղերուն նմանապէս:

Սոյն տեղեկագիրը կը ներկայացնենք Ընդհ. Պատգամաւորական Ժողովին իբրեւ 17 ամիսներու ընթացքին տարած աշխատանքին մէկ պատկերը:


Յաջողութիւն կը մաղթենք ձեր տանելիք աշխատութեան:

Յարգանք՝

Ի ԴԻՄԱՅ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐ. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ատենադպիր՝  
ԳԵՈՐԳ ԿԻՒԼԽԱՍԵԱՆ

Ատենապետ՝  
ՄՈՒՇԵՂ ԱՃԷՄԵԱՆ



Կեղը՝ վարչութեան Անդամներն են՝

ՄՈՒՇԵՂ ԱՅԼՄԵԱՆ՝ Ատեմապետ

ԳԷՈՐԳ ԿԻԼԵԱՍԵԱՆ՝ Ատեմաղայիր

ՅԱՐՈՒԹԻՆ ԵՕԼԼԻԿԵԱՆ՝ Գանճապահ

ՅՈՎԱԿԻՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԻԿԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ԳԶԻՐԵԱՆ

ՅԱԿՈԲ ԲԱՐԵՋԱՆԵԱՆ

ԹԱԳԷՈՍ ՀԷՏԻՑԵԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

—«o»—

Հասցեն է՝

GENERAL UNION OF HARPOOT

84 P. O. Box

Somerville, Mass.

«Ազգային գրադարան»



NL0219890

9/1/27

42. 873